ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

09-ը մայիսի 2025թ.

ՈՒՂԵՐՁ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մայիսի 9-ը հայոց պատմության ամենահիշարժան ու փառահեղ էջերից է. տարբեր ժամանակներում հենց այս օրը հայությունը իրեն հատուկ արիությամբ, անվեհեր ոգով ու անկոտրում կամքով կերտել է վճռորոշ ու պատմական հաղթանակներ:

Չնայած վերջին տարիների ցավալի շրջադարձերին՝ Մայիսի 9-ը մենք շարունակում ենք հիշատակել որպես եռատոն՝ պահպանելով օրվա վեհ խորհուրդը և հավատալով մայիսյան հաղթանակների վերածննդին: Այսօր հպարտությամբ հիշատակում ենք Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի, 1992 թվականին հրաշագեղ Շուշի քաղաքի ազատագրման ու Արցախի պաշտպանության բանակի հիմնադրման մասին:

Ֆաշիզմի դեմ պատերազմում և Արցախյան ազատամարտում հաղթանակի ճանապարհը մենք անցել ենք պատվով, աննահանջ պայքարով, բայց և անդառնալի կորուստների ու արյան գնով: Առաջնահերթ ուզում եմ խոնարհումով հարգենք հանուն հայրենիքի մարտերում զոհված հայորդիների հիշատակը:

Հայրենական մեծ պատերազմի հարգելի՛ վետերաններ.
Կարևորելով յուրաքանչյուրիդ անգնահատելի ներդրումը՝ ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 80-րդ տարեդարձի կապակցությամբ, որը ձեռք է բերվել նաև հայ ազգի անուրանալի մասնակցության, շուրջ 600 000 հայերի անձնվեր պայքարի, մեծանուն հայ հրամանատարների ու մարշալների նշանակալից ավանդի շնորհիվ:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհակալ լինենք Արցախյան ազատամարտում մայիսյան հաղթական դրվագներ կերտած ազատամարտիկներին, որոնց սխրանքները մեզ համար շարունակում են մնալ ուղենիշ և հայրենասիրության վառ օրինակ:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Հաղթանակի, ազատության և խաղաղության տոնը մեզ համար թանկ ու կարևոր խորհուրդ ունի, այն վաստակել ենք կյանքերի գնով, և այսօր էլ շարունակում ենք պահել բազում խոչընդոտներով, պայքարով. միաժամանակ Արցախ աշխարհում հայոց եռագույնը կրկին ծածանելու լուսավոր տեսլականով: Ուստի մաղթում եմ բոլորիս տոկունություն, համախմբում, ազգային ներուժի կենտրոնացում՝ հանուն մայիսյան հաղթանակների վերականգնման և ամբողջական հայրենիքի ամրապնդման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**